

ԵՊՀ “Կայուն զարգացման” կենտրոնի գործունեության համառոտ հաշվետվություն

Մասնագետ-փորձագետների կողմից աշխատանքները կատարվել են երկու հիմնական ուղղություններով՝ 1) ՀՀ տարածքում լեռնարդյունաբերական թափոնների ծավալների վերաբերյալ տվյալների հավաքագրում, դրանց կուտակումների ծավալների աճման գնահատում և 2) թափոնները որպես տեխնածին հանքավայր օգտագործելու հիմնավորում ու բնապահպանական տեսակետից թափոնների վտանգավորության գնահատում:

Ներկայումս ՀՀ-ում առկա են մոտ 20 պոչամբարներ, որոնցից **կոնսերվացված** են միայն 7-ը, 1-ը կառուցման փուլում է, իսկ մյուսները գործում են այս կամ այն աստիճանով: Հաշվի առնելով լեռնային ձեռնարկությունների նախագծերում տարեկան արտադրողականության պլանները մեր կողմից կատարվել է հիմնական գործող պոչամբարների ծավալների աճի գնահատում: Այսպես, Քաջարանի կոմբինատի պոչերում՝ Արծվանիկի պոչամբար, ծավալի աճը կազմում է 0.9 մլն խոր.մ/ամիս, տարեկան կտրվածքով այն կկազմի մոտ 11 մլն խոր.մ: Գեղանուշի պոչամբարում (Շահումյանի հանքաքարերի հարստապոչեր) ծավալների աճը կազմում է 11500 խոր.մ/ամիս, Ագարակինը՝ 145 հազ. խոր.մ/ամիս, Աղթալայի կոմբինատի պոչերինը՝ 4300 խոր.մ/ամիս, Սոտքինը՝ 58 հազ. խոր.մ/ամիս: Մնացած բոլոր պոչամբարներում միասին վերցված ամսեկան կուտակվում են մոտ 1400 խոր.մ պոչեր: Կարելի է ասել, որ հանրապետության տարածքի գործող պոչամբարներում ամսեկան ծավալային աճը կազմում է 1.12 մլն խոր.մ, տարեկան՝ 13.4 մլն խոր.մ:

Թափոնները որպես տեխնածին հանքավայր օգտագործելու հիմնավորման համար որպես օբյեկտ մեր կողմից ընտրվել է 1977թ. կոնսերվացված Ողջիի պոչամբարը, որում 9 տարիների ընթացքում կուտակվել են միայն Քաջարանի կոմբինատի հարստացման պոչերը (43 մլն մ³): Ողջիի պոչամբարի գնահատման նպատակով կառուցվել է մի մոդել, որը կարող է կիրառել նաև նմանատիպ այլ թափոնակույտերի գնահատման գործընթացում: Մոդելի կառուցումն իրականացվել է տարածքի 1:10000 մասշտաբի տոպոգրաֆի վրա բազմաթիվ կտրվածքների և նրանց հիման վրա եռաչափ բլոկային մարմնի ստացման ճանապարհով: Ներկայիս (**կոնսերվացումից հետո**) մակերեսի, բացարձակ նիշերի և պոչամբարի սահմանների վերաբերյալ տեղեկատվությունը ստացել ենք դաշտային չափագրումների տվյալներից GPS սարքավորումների օգնությամբ, ինչպես նաև տիեզերական լուսանկարների և տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Արդյունքում Ողջիի պոչամբարի կառուցված եռաչափ մոդելում առանձնացվել են օգտակար բաղադրիչներով հարուստ ենթաշերտերն ու դատարկ, վնասակար, պոչերի հնարավոր տեղամասերը: Ողջիի պոչամբարի ներուժի գնահատման և կառուցումների համար տվյալները վերցված են երկրաբանական ֆոնդերից (այդ տարիներին արդյունահանված և վերամշակված հանքաքարերի 5 ԳՔ-ի տվյալների վրա):

Առկա պոչամբարների մեջ ըստ մեր գնահատումների առավել վտանգավոր են հանդիսանում Արարատի ոսկեկորզման ֆաբրիկայի պոչամբարները, որից հետո գալիս են Արծվանիկի, Գեղանուշի և Ագարակի պոչամբարները: